

Ի ծանօթութիւններուն վրայօք գլխաւ
բար | օրտա՛ն Ռէստէլը և | օրտ Փաւլ

մերթնը ատենաբանեցին :

Խորհրդանային մէջ նոյն գիշերը ուշ աւտեն որոշուեցաւ որ 1852—53 տարւոյն ծովային զօրքը 39,000 հոգիէ բաղկանան , և 5,000 սւլ պահցու նաւային զօրք գտնուին :

— Սօրինի արդիւնքը լրագրելը ընթերցողաց ուշագրութիւնը հրաւիրելու կերպիւ մը | օրտ Ղօն Ուրստէի և | օրտ Փալմէրսթընի հաշտութիւնը կը ծանուցանէ : Ըս գիտաւաճը արտադրանաց և պաշտպանողականաց վիճակին մէջ մեծ փոփոխութիւն կը կրնայ պատահուիլ :

— Ըրտաբին գործոց նախարարի պալատը տարօրինակ գիտուած մը պատահեցաւ , որ շատ ծանր հետեանք կրնար ունենալ :

Ըրտաբին գործոց նոր նախարար Սալմէզ-պըրթի կամը Ըսգրիոյ գեներալին այցելութիւնը կէս օրէն ետքը ժամը երեքին ընդունելու ժամադիր եղած էր : Աշտակեալ ժամուն գետաւանը գնաց , բայց Սալմէզպըրթի կամը սը բանի մը փոքրեկան յառաջադէպի զբաղմունքի բռնուած ըլլալով գետաւանին խնդրեց որ ժամը չորսին կրկին գայ : Երեք ժամէն մինչև չորսը երթալով կամին ու Ըսգրիոյ գետաւանը խօսակցութիւն ըրած որոշին աւատտաղը (Թափան) զարհուրելի շաշիւնով մը փրկեցաւ , և սեղանները , աթոռները ու սենեկին յատակը (տապան) գաճի (ալը) երեք չորս մաս հաստ կտորուանքներով լեցուեցաւ : Սէճ բարեբաղդութեամբ կամը զբաղած ըլլալով գետաւանին հետ չէ կրցիր երկար տեսնուելու և հետեւեալ ժամուն յետաձգել է , ապա թէ ոչ երկուքնին ալ մեծ փոխանքի մէջ պիտի խնային :

— Իռլանտիոյ փոխարքային Տուսլին միտնելը շատ հանգիստաւ եղեր է : Սիայն Թէքանի մը անկարգութիւններ պատահելու են , ժողովուրդին և Երրորդ-Թէքան բռնած գործոց աշակերտներուն մէջ տեղը ինչու որ Իօրտ տեղակային երթալու ատենը աս վերջները նարնպոյն (Թուրուեճի) գրօշակ մը բաշեր էին : Իայց շատ չանցնելով պահապան զօրքը կիան և կռուողները զատեցին մէկ մէկէ :

Սօրինի արդիւնքը լրագրելը կը գրէ թէ հռովմեական կրօնաւորներէն ոչ մէկը գացեր է փոխարքային այցելութեան :

— Ենգլիոյ Տոնը և Գաղղիոյ Բալէ Տոնը գերեայ քաղաքներուն մէջ տեղը ջրին տակէն հաստատուած հեռագրական հաղորդակցութիւնը շատ կը բանի : Ըրտաբին ամիսը 398 լիւա , երկրորդ ամիսը 517 , լիւա , և երրորդ ամիսը 519 լիւա սթեւիլն գումարուեր է , յիշեալ տարածքային հեռագրին միջոցաւ թղթակցութիւն ընդունելին : Ըս գումարներէն կ'երեւի որ յիշեալ նորահար ձեռնարկութիւնը աղէկ պիտի յաջողի , մանաւանդ որ տարեկան ծախքը 2,000 լիւայէն աւելի չը պիտի ըլլայ կըսեն :

Ալեքսանդրի Բալէայով եկած Ենգլիոյ հեռագրական լուրերը կը ծանուցանեն թէ մարտի 20 ին եղած նիստին Տէրսիլի կամը Իօրտեղու խորհրդանային մէջ յայտնեց թէ ապրիլ , մայիս կամ յունիս ամիսը խորհրդանայինները լուծելու միտք ունի : Իօրտ կրնայ աս ծանուցման հաւանութիւն տուաւ : Իայց ազգային խորհրդանային մէջ Սիթթըրտի զբաղմունքի մի և նոյն ծանուցումը ըրած ատեն նը , Իօրտ Իրստէլը և պարոնայք Բոդալեն , Օզլորն և Բարտուէլ գէմխօսեցան :

ԳԱՂԴԻԱ. 19 մարտ :

Նախագահ իշխանը շատ կարեւոր հրովարտակ մը հանեց , որով հարկերին հինգ տաւրեկան շահ բերող հասարակապետութեան պարտաւորահանքերը տարին հարիւրին չորս ու կէս վաշխ տալու թղթերու պիտի փոխուին : Յիշեալ թուղթերէն ունեցողները աս հրովարտակով տարին 18 միլիոն ֆռանք վընաս պիտի ընեն : Իայց անոր փոխարէն որովհետեւ քաղաքական հարկերն ալ պիտի թեթեանան , նոյնպիսի գումար մըն ալ հարկաւոր ժողովուրդը պիտի չահի : Ըս մուրհանգիստներէն

ունեցողները 20 օրուան մէջ կամ զանոնք պիտի փոխեն և կամ ստակը պիտի աւնուն :

— Հասարակապետութեան 1852 տարւոյն ծախսը և եկամտից հաշիւը նախագահ իշխանին հրովարտակով որոշուեցաւ : Ըս տարւոյն սովորական և արտաքայ կարգի ծախքը մինչև 1,503,398,846 ֆռանքի կը հասնի , որ 6765 միլիոն օսմանեան դահեկանէն աւելի կ'ընէ : Իսկ եկամուտը 1,449,413,604 ֆռանք կը հաշուի որն որ 6522 միլիոն դոլարէն մօտ կ'ընէ : Ըս հաշուէն կ'երևի որ 1852 ին ծախքը աւելցած 54 միլիոն ֆռանքի մօտ է , կամուտէն աւելի պիտի ըլլայ :

— Իռլի պալատը գեղեցիկ և հայտնաւ շինութիւններով զարդարուելու վրայ է : Խուրիւրի պալատէն Իռլի գլխաւոր դռնը երթալու տեղը ծառերով հովանաւորած հրտարակ մը պիտի շինուի , որուն աջ և ահեակ կողմը լայնատարած շինութիւններ պիտի հաստատուին : Ըսոնց մէկուն մէջ գետային կողմը ընդարձակ սրահներ շինուելու է բաղմամբ ժողովքներու համար , ինչու որ բաղմամբ մեծ ժողովատեղի մը մինչև հիմայ չկայ Փարէզի մէջ : Ըս շինութիւններուն մէկուն մէջ հեծելազօրաց և միւսին մէջ հեծելազօրաց բնակարաններ պիտի հաստատուին 2000 զինուոր տեղաւորելու համար : Ըստիւր նախագահ իշխանը իւր ձեռքի տալով պիտի ունենայ ներքին գործոց նախարարութիւնը , ընդհանուր աստիկանութիւնը , հեռագրական հաղորդակցութեց գրատունները , ազգային տարարներ և բաւական զինուորաւոր զօրաց գումար մը : Իռլի պալատը զարուս երեւելի յիշատակարաններէն մէկը պիտի ըլլայ , յիշեալ շինութիւնները լրմնաւ լու ըլլան են : Ըսոնց ծախսը համար 26 միլիոն ֆռանք նշանակուած ըլլալով 2 միլիոն ֆռանք տարւոյն հաշիւը , և մնալիսը ներքին տարւոյն հաշիւը , և մնալիսը վեց վեց միլիոնով հետեւեալ չորս տարիներուն հաշիւը պիտի անցնի :

— Փարէզի մէջ տարին 12 կամ 13 հազար հոգի կը մեռնի : 1850 ին մեռնողները 12,851 հոգի էին , որոցմէ 6,033 ը աղքատութեան պատճառաւ թաղման ժամանակը բրիտանական արարողութեան և գերեզմանի օրհնութեան զուրկ մնացեր են : Ըսանի լուսաւորեալ և քրիստոնէայ ազգի մը մայրաքաղաքին մէջ այս եղելութիւնը զարմանալի և ցաւալի բան մը ըլլալով Փարէզի արքեպիսկոպոսի խնդրանքը նախագահ իշխանը հրաման հանեց , որ այսուհետեւ գերեզմանատանց չըրջակայքը երկու կրօնաւոր գտնուին , և հոն տարուած աղքատ մեռելները առանց որ և իցէ վարձուց թաղեն ու վերջին օրհնութեան չըլլեն շահատիրութեամբ :

— Բարիէ քը Ֆարէշ գաղղիացի լրագրոյն մէջ հետեւեալ լուրը կը կարգաւոր , որն որ թէպէտ ստուգութեան կարօտ է , բայց ուշագրութեան արժանի երեւելի բան մը ըլլալուն համար այս տեղս թարգմանեցինք :

« Իբր սոսոյք կ'ընեն թէ Ենգլիոյ արտաքին գործոց նախարար Իօրտ Սալմէզպըրթին քաղաքական փախտականները Իօնտոնէն հեռացնելու գլխաւորութիւն ունի , որոնք գաղանի միաբանութիւններով և ապստամբական լիւրստեղծ կ'ըստաւանան : Ըմենուն յայտնի է որ աս խնդիրը շատ անգամ և անօգուտ ատեն Իօրտ Բալմէրսթընին առաջարկուած էր հիւսիսային տերութեանց կողմանէ :

ԱՆՍՏՐԻԱ. Վիեննա 12 մարտ :

Փրուսիա տարւած նոյն իսկ քը Կիւլման լրագրելը մէկ թերթին մէջ հրատարակած էր թէ Ըսգրիոյ տերութիւնը Գաղղիոյ հասարակապետութեան խորհուրդ կուտայ որ շեղուէտիւ (Օվիցերն) Պէլճիւրայի և Սարտէնիոյ երկիրները զօրքով կոխէ : Ըսգրիոյ կառավարութիւնը յիշեալ լրագրին նոյն թերթը արգելելով աս լրոյն զարարտութիւն ըլլալը և հրատարակաց խանդարեալ բարոյականէն յառաջ գալը հրապարակաւ կը յայտնէ :

— Վ. Կայսրը Վիեննայի գտնուած ատեն նը Վիեննայի դաշտին մէջ զօրահանդէս մը եղաւ , ուր մարաթախտ Ռատեցիլին ձին յանկարծ ետեւի տղերքուն վրայ կանգնեցաւ : Կայսրը աս տեսնալուն պէս իւր ձիէն իջաւ ու սանձէն բռնելով մարաթախտին քով տաւրու ու անոր հեծած ձիայն հետ փոխել ուղեց : Իօրք բանակին և բաղմամբ հանդիսականաց ներկայութեանը երեւելի մարաթախտին կայսեր կողմանէ եղած ուշագրութեան շնորհքը մեծ ազդեցութիւն ըրաւ :

— Յարգելի ընթերցողաց յայտնիք որ Ըսգրիոյ պատերազմական պաշտօնատարներէն Հէյնաու զօրապետը անցեալ տարի Իօնտոն Պարբէյ Փէրքինս ընկերութեան գարեջրի գործարանը գտնուելով գործաւորներէն չաւարտ անարգութեամբ , ու ինքըզինքը աղաւաղու համար հասարակայ տուն մը այսինքն ըմպելեաց կրպակ մը պատուարուեցաւ , որուն տիկինը մարգարիութեամբ պաշտպանելով զիշեալ զօրապետը եղելութիւնը աստիկանաւ նախեան իմացուց ու աղաւաղ անարգողաց ձեռքէն :

Ըսգրիոյցի յիշեալ կնոջ շնորհակալութիւններ յայտնելու համար աս անգամ Վիեննա ազամանդեայ ընտիր մանեակ (կերտանը) մը շինելու տունն ստորագրութեան միջոցաւ ժողոված բաւական գումարով Յիշեալ մանեակին վրայ Հէյնաու զօրապետին նիւրազիրը կայ այս խօսքերով Ըսգրիոյն Բրախի Գաղղիոյն :

— Իօրտ շոգեշարժ նաւարկութեան ընկերութիւնը աս մօտերս Ենգլիոյ մէջ վեց շոգեւաւ ծախու առաւ , և ուրիշ երեք հատ ալ գնելու վրայ է : Ըսոնցմով յիշեալ երեւելի ընկերութեան նաւերը 50 հատ պիտի ըլլան :

— Կայսերական հրովարտակով մը Թրեստ քաղաքը Ըսգրիոյ բանակին զօրք տալէն մինչև 1858 տարին ազատ պիտի ըլլայ :

— Թրեստին մարտի 14 թուականով կը գրեն թէ Սիստիա քաղաքը աղաւաղու հանգիստ ծանուցուելով բաղմամբ Գաղղիական և Ենգլիական նաւեր հոն գացին :

ԲՐՈՒՍԻԱ. Պէտլին 13 մարտ :

Վիեննայի թագաւորը ներքին գործոց նախարար Պ. Տը Սանթէֆըլը աղեւաղանին հրաման տուաւ , որ մեծազօր Սուլթանին չընորհած երկրորդ կարգի Իշլի Իֆէկիւրը ընդունի և հանդիսաւոր օրերը վիզը կախէ :

— Տերութեան 1852 ին տարեկան ծախուց հաշիւը քննելու համար երկրորդ խորհրդանոյն կողմանէ ընտրուած յանձնարարական ժողովը պատերազմական կառավարութեան մասին աշխատութիւնը աւարտեց : Խաղաղութեան ժամանակը 130,000 զօրք և 26,000 ձի պահելու համար 27,298,375 թալէն պէտք են , այս ծախուց գումարը 1851 ին 25,411,725 թալէն էր :

ՆԱՓՕԼԻ. 24 մարտ :

Հասարակայ գաւառարակութեան նախարարի առաջարկած նոր կանոնադրութիւններ թագաւորի կողմանէ հաստատուեցան : Ըս կանոններուն մէջ որոշուած է որ 30 տարեկան հասակը գետ չհասած ուսումնականները դաստաւորութիւն չկրնան ընել , և աւելին ուսումնարանի մէջ քահանայ մը գլուխու աշակերտաց կրօնական կրթութիւն տալու համար :

ՊԵՆՏԻՔԱ. Պրուսիա 18 մարտ 1852 :

Ռուսիոյ կայսեր խորհրդական Տոլորուքի իշխանը , Պետրպուրկի Կախարին իշխանը և նմանապէս Ռուսաց կայսեր պաշտօնատարներէն թուրքացի իշխանը ամսոյ 13 ին Պրուսիա հասան :

— Պէլճիւրայի երկրթութեայ ճանապարհորդներէն , ապրանքներէն և ուրիշ ամէն տեւակ բեռներէն 1852 ին առնուած ստակը 15,885,814 ֆռանքի հասեր է , նախընթաց տարին 1,033,083 ֆռանք աւելի ըլլալով :

Հ.ՈՒՎՍ. 10 մարտ :
Կարտինալ Ֆերրիսին Պապին խոստովա-
նահայր ընտրուեցաւ : Կարտինալ Քասթրա-
քանի տեղը :
— Ինքնագրաւ Պէթ ըստած լրագրերը Հը-
ռովմեական երկիրներու մէջ արգելուեցաւ :

ՉԻՆԱՍՏԱՆ. Հօնկ — Քօնկ 20 յունվարի :
Քրիստոսի քաւառին ապստամբները կայ-
սերական զօրաց վրայ յաղթութիւն մը ըրին,
և այս լուրը Քանթօն տարածուելով մեծ աղ-
գեցութիւն ըրաւ հասարակութեան վրայ :
— Քանի մը ժամանակէ հետէ ծովային
ասպատակները (գուրաւտ) շտանալով վա-
ճառականաց նաւերուն մէջ վնաս կը հասու-
ցանէին, Սանտաքրիններուն խնդրանքը եր-
կու անգղիացի շոգենաւներ ուղարկուեցան
յիշեալ ասպատակները հալածելու կամ ձեռք
ծնելու համար :

— Չինաց աղէէն շատ անձինք Քալիֆօռ-
նիա երթալու սկսան : Իսկոմբեր ամսոյ մէջ
գաղթականներով լեցուն վեյ նաւ գացին,
ստոր նաւ ալ յունվարի վերջերը պիտի եր-
թային :

— Հնդկաստանի Հայտերադատ երկրին
իշխան (նիզամ) Բնդիւ պրեսիտան Հընդ-
կաց ընկերութե մեծ գումար դրամոյ պարտք
ունենալով՝ վճարել չկրնալուն համար, յիշ-
եալ պարտքը փոխարէն մէկ կտոր ջրանուած
աղամանդ (էլմա) մը առաջարկեւ է : Ըս-
քարին ծանուցելով 400 քրաթ ըլլալով՝ բան-
ուելու ըլլայ նէ՝ մէկ քաւորդ մասը կը պակ-
սի : Ըստ ամենայնիւ աշխարհի մէջ ծա-
նօթ եղած չորս ամենամեծ աղամանդներէն
մէկն է : Յիշեալ քարերուն մէկը Պրադիլա,
մէկը Ուոսասան, և երրորդը Լիզիլա կը
գտնուին : Ըստ վերջինոր լեռն լուսոյ (քիւ-
հի նուր) կը յիշուի, 300 քրաթ ծանու-
թիւն և 600.000 լիւս կամ 70 միլիօն օսման
եան դահեկան արծողութիւն ունի, և անց-
եալ տարի Եմսօնի տիեզերական տօնալա-
ճառին կամ վաճառաւորային մէջ բոլոր հան-
դիսականները հիացայ :

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հետեւեալ նամակը ուսումնական հայ-
աղբւոյ մը կողմանէ ընդունեցինք, և անոր
խնդրոյն համեմատ սիրով յանձնառու կ'ըլ-
լամք զանկիւյ լրագրոյս մէջ դնելու, յուսու-
լով որ բոլոր հայագի բարեսէր հասարակու-
թեան օրին հաճելի պիտի ըլլայ :

« Յարգւոյ տեաքը Լոյսեան Լղանուոյ :
« Եւտի քուլի կողմը գտնուած սուրբ
« Փրկչեան հիւանդանոցին, և անոր մէջ
« հաստատուած դպրոցին վրայօք շատ ան-
« դամ տեսակ տեսակ դատողութիւններ կը
« լսէի : Երբեմն գովաբանութիւն երբեմն
« բամբասանք ականջս հասնելով յիշեալ աղ-
« քային շինութեան վրայ ճիշդ տեղեկութի
« ունենալուս ինքզինքս չէի կրցեր համոզել
« և անոր համար շատոնց մատչիր էի ան-
« ձամբ գնալ անգամ մը և ճշմարտութիւնը
« հասկնալ :

« Թեպէտ հայ հասարակութեան չնչին
« անդամներէն մէկն եմ, բայց աղջային բար-
« եաց միշտ ցանկացող ըլլալուս և զանոնք
« ինձ պարծանք համարելուս իմ սիրտս քաջ
« կը վիայէ : Ուստի առ շաբաթ շատոնց մը
« աղբրեալ այցելութիւնս ընելու յաջողե-
« լայ :

« Գլխաւոր նպատակս ուսումնական մա-
« տը ըլլալով՝ առաջին այցելութիւնս դպրո-
« ցին, այսինքն դաստառութեանց յատկաց-
« եալ երկու սենեակներէն բարձրագոյն դա-
« տու աշակերտաց գտնուածին ըրի :

« Ի հարկէ յառաջագիւցնութեան որ առ-
« տիճան հասնելուն վրայօք ստոյգ գաղա-
« տիք ունենալու համար՝ աշակերտաց գըր-
« ուածները քննել, և սովորած դասերնին
« կարգացնել, և քերականական կանոնաց

« վրայ հարց ու փորձ ընել պէտք եղաւ :
« Ուրախ եմ ըսելու, և առանց չափա-
« զանցութեան կ'ըսեմ որ իմ անկալութե-
« նէս շատ աւելի յառաջադիմութիւն տե-
« սայ :

« Գաղղիականէն հայ աշխարհի կամ գը-
« բարար լեզուի թարգմանած, հայերենէն
« գաղղիականի դարձուցած՝ և մեր մայրենի
« լեզուի վրայ շարադրած աշխատութիւններ
« բուն ընթերցանութիւնը յիշաւի զմայել-
« ցուց զիս : Եւս գործնական աշխատութեց
« համար ընտրուած բարոյական առարկանէ-
« բուն պատմականութիւնն ալ վարժապե-
« տաց առ մասին ուշադրութեամբ վիայու-
« թիւն կ'ուսայ :

« Թուղթի վրայ առնուած աշխատութիւ-
« ներով չբաւականանալով՝ աշակերտաց ձեռ-
« քը գաղղիարէն գիրք մը փալով՝ ի բերանոյ
« հայերէնի թարգմանել արվի : Նմանապէս
« անգղիարէն գիրք մը բանալով՝ թէ հայե-
« լէնի և թէ գաղղիարէնի գարգունել ար-
« վի, և սրտով ուրախացայ աշակերտաց
« պատրաստ և համարձակ պատասխանել-
« նուն :

« Չեմ ըսեր որ աշակերտաց ամէն ալ
« ամէն բանի մէջ կատարելապէս յառաջա-
« դէմ են : Ելլ ոմանք յիշեալ առարկաներուն
« մէջ, այլք գծագրութեան և վայելագործ-
« թեան և ուրիշները տաճկերէն լեզուի մէջ
« շատ յոռաջ գացած են :

« Հիւանդանոցի ուսումնարանին մէջ ի-
« տալերէն լեզուի ալ դաստառութիւն կ'ըլ-
« լայ, բայց ժամանակ չեղաւ առ ալ քննե-
« լու և ոչ ուրիշ աւելի հարկաւոր աւար-
« կայները, որոնքքն քրիստոնէական վարդա-
« պետութիւն, աղբային և տիեզերական
« պատմութիւն, և աշխարհագրութիւն և
« թուաբանութիւն :

« Ուստի առ վերջիններուն մէջ ինչ յա-
« ռաջագիւցնութիւն ըլլալը չեմ գիտեր, բայց
« յառաջագոյն դպրոցում մը ունիմ որ իմ
« քննած առարկաներուն աստիճանին հա-
« սած չէ : Ի որտէ կը յուսամ որ ուրիշ ան-
« դամ մըն ալ այցելութեան երթալու ըլլամ
« նէ, և առաջագիւցնութիւնս անհիմն է ը-
« սելու կարողանամ :

« Թեպէտ ներկայ դրոյս նպատակը միայն
« տեսածս պատմել և սրտիս զգացած մեծ
« մխիթարութիւնը յայտնել էր՝ առանց ներ-
« քին տնօրէնութեանց խառնուելու, միայն
« այսպիսի կը համարձակիմ ծանուցանել թէ
« իմ տկար գատողութեամբս խալելէն լեզ-
« ուի դաստառութիւնը բարձուն ու անոր
« տեղը տաճկերէնին տեղի հոգ տարուի՝ ա-
« ղէկ կ'ըլլայ :

« Եւ երկու լեզուներուն օգտակարութե
« մէկ մէկէ տարբեր աստիճանները առանց
« յիշելոյ յայտնի են :

« Լոյսելութեան օրը առ հրաշալի օրերէն
« մէկը ըլլալով՝ հիւանդանոցին մէջ շատ սրը-
« տաշարժ տեսարանի մը պատահեցայ : Եր-
« կու հարիւրի չափ որը, աղքատ, անուե-
« բունը հայ մանկանց գաղական գեղատներ
« բաժանելու պատրաստութիւն կը տեսնը-
« լէր : Խօսեցնը իրենց համար բերուած
« նոր ուրքի ամանները փորձելու ատենը՝ ե-
« բանուն վրայի խնդութիւնը անկարելի էր
« առանց սրտի շարժման տեսնել, և իսրոք
« չընտրահալուել բարեբարաց, որոնք սղդիս
« հիւանդները բժշկելու, խեղճարները պա-
« տրասրբելու, աղքատները կերակրելու և
« հագուցանելու, և որք ու աղքատ մանկրու
« լայն սնունդ ու զգեստէն զատ, բարոյական
« կրթութիւն տալու համար հաստատուած
« սոսանի երեւելի հիւանդանոցին և աղքատա-
« նոցին բարեպաշտ առատաձեռնութեամբ
« կ'օգնեն : Իրաւամբ կրնամ ըսել որ առա-
« գային հաստատութեան ծախս եղած ըս-
« տակը կորուսեալ չէ, որչափ ալ մեծ գու-
« մարի հասնելու ըլլայ :

« Լինիւ հոգաբարձուոյ ալ անխնայ և
« բարեկան աշխատանքը մեծի գովութեանց
« և շնորհակալեաց արժանի են :

« Յարգւոյ տեաքը, Թեպէտ գիրք քիչ մը
« ներկարեցաւ, բայց կը յուսամ որ Լոյսեան
« Լղանի պատուական լրագիրնու գ մէջ պա-
« րունակելու շնորհը չէք խնայեր, որով շատ
« կը պարտաւորեք :

Ղևոնդ Ժառայ յէր

Լ. Ն.

— Սեծապատիւ Սիսաք ամիրան քանի մը
ամսուան ճանապարհորդութենէն ետքը՝ առ-
այոյ 17 ին մայրաքաղաքս հասաւ : Յիշեալ
երկերէն անձը Լիւթի խալէին անցնելու ատե-
նը, այն տեղ հայ վաճառականաց յաճախ-
երթեկեկութիւնը լսելուն պէս, իւր աշխար-
հածանօթ բարեպաշտութեամբը երկեղցի
կայ մի արդեօք հարցնելով և խիստպէս
չգտնուելը, բայց շինելու գիտաւորութիւն
կամ փափաք ըլլալը իմանալով, խիտն իւր
քստկէն առատ օգնութիւն իրեր և հոն գըր-
նուող բարեսէր հայաղբները յորդորեք է
որ անմիջապէս շինութեան ձեռք դարձուի :
Արախեան տեղը արդէն պատրաստուած
բաւական պտակ ալ գումարուած է, կը յու-
սամք որ քիչ ատենէն երկեղցւոյն շինուե-
լան ու լրմնալուէն լուրն ալ հաղորդելու ու-
րախութիւնը ունենամք :

Սեծապատիւ ամիրան որ աղբին բարա-
թիւն ընելու առիթները կը փնտրէ և չե-
փախցնելը, Տրապիզոն քաղաքն ալ հասած
ատենը, հարցուց թէ ամենապատիւ և աղ-
գանամ սրբադան Պատրիարքին և աղբային
գերագոյն Ժողովոյ քաջալերութեամբը յիշ-
եալ քաղաքը շինուելու դպրատունը լրմնա-
մի, բայց իմացու որ շինութե համար ձեռք
բերուած 60 հազար դուռուշէն 42 հազարը
եկամուտ հաստատուելու համար ուրիշ շին-
ուածներու ծախս եղեր է և միայն 18 հա-
զար մնացեր է :

Ուստի ինքը առատաձեռն օգնութիւն ը-
նելէն ետքը այն տեղի երեւելներն ալ յորդա-
րելով խրախուսելով դպրատան համար ձեռք
բերելին գտնուած ստակը կրկին 60 հազարի
լեցնելու առաւել է : Այլ յուսամք որ յիշեալ
աղբօգնու շինութիւնն ալ մօտ ատեններու
կը լրմնայ : Աղբասէր ամիրային առ բարե-
պաշտական գործերը գովութեան արժանի են
ըսելը, արեգակը արեւելքէն կ'ըլլայ, ըսելու
կը նմանի, որն որ ամէն մարդ գիտէ : Ուս-
տի գովելը մէկդի ձգելով (որն որ ըստ աղբան-
այն ընելու ալ տկար եմք), մեր խորին շնոր-
հակալութիւնը յայտնելու կը պարտաւորեմք
և կարծեմք չեմք սխալիլ եթէ ըսեմք թէ բո-
լոր հայ հասարակութիւնը մի և նոյն զգաց-
մունքով պիտի ընդունի առ լուրերը :

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Լնցեալ շաբաթ կայսերական որդի մը առ-
խարհք եկաւ, որուն անունը սուլթան Սէհ-
մետ Ռիւշաի Էֆէնդի գրուեցաւ :

— Ուրբաթ օր մեծաղօք կայարը, իւր սո-
վորական հետեւակօրը Թօփհանէի մզկիթը գը-
նաց կէս օրուան աղօթից ներկայ գտնուելու
համար :

Նորին կայսերական մեծութեան գնալու
ատենը, Թօփհանէի առաջը խորսիսի վրայ
դանուած գաղղիական, հոյսնապոյի և սուղ-
բիական պատերազմական նաւերը 21 թնդա-
նօթ արձակելով՝ օղջուկեցին զվեհափառ Սուլ-
թանը :

Լնցեալ շաբաթ Գաղղից հասարակա-
պետութեան գործակաւոր մօսիէօ Սապա-
թիւն, և միջերկրական ծովու մէջ սլավոնաւոր
Գաղղիացի նաւախմբին հրամանատար մօսի-
էօ Ռօմէն Տէֆօսսէի ընկերութեամբ պաշտօ-
նատարաց դեսպանատան և Պանթօր նաւու
Չորաղանի պալատը գնացին, Էսթիալ անուն
շոգենաւով : Բարձրագոյն Իրան առաջին
թարգման Եւրեւտաին պէյը, և դեսպանաց
ներկայացուցիչ Բեհմիլ պէյը յիշեալ երեւե-
լն այցելուները ընդունեցին, և արտաքին
գործոց նախարար վեհմախալ Է. Է. փաշան

զանոնք վեհափառ սուլթանին ներկայացուց։
— Վերջիններս հրամանատարին ընկերակցութեամբ մայրաքաղաքիս գլխաւոր մեզ-կիթները պարտեւրու գնացին անցեալ չորեք-շաբթի։

— Ուրբաթ օր օտար տէրութեանց դես-պանները և շաբաթ օր մեծ ծովապետ բարձ-րապատիւ Սէհմէտ Սէիփաշան մօտէօ Սօ-մէն Տէֆօսսէին այցելութեան գացին և սու-վորական թիւ թնդանօթաց արձակմամբ պատուեցան։

— Թեմ մօտէօ Սօմէն Տէֆօսսէ և թէ մօս-իէօ Զուֆթ պատերազմական նաւապետները անցեալ շաբաթ մեծ եպարքոսին, արտաքին գործոց նախարարին, մեծ ծովապետին, թըն-դանօթաձիգ զօրաց նախարարին զատ զատ այցելութեան գնացին։

— Իրաքիս երրորդ թերթին մէջ խեղճ տաճիկ աղջկան մը երեք հրէից ձեռքէն քա-շած չարաբարները և յանցանաւորաց Շէյխ-իւլ-խալաֆ Էֆէնտիին առջև դատուելու վրայ ըլլալը յիշեցինք։ Հիմա աս դատաս-տանին վերջին որոշումը իմացընեւր։ Կա-րող եմք։ Խեղճ աղջիկը Քուսպարհանէի հի-ւանդանոցը տարին, ուր տեղ ամեն կերպ բժշկական հոգացողութեամբ նայուելու վը-րայ է։ Եթէ աղջիկը մեռնելու ըլլայ, զանի-կայ չարաբարող երեք հրէաներն ալ մահուան պատիժը պիտի կրեն իբր մարդասպան։ Իսկ եթէ աղջիկը քաշած ցաւերուն դիմանալով ապրիւր ըլլայ, ան ժամանակ յանցանաւոր-ները, աղջկան հիւանդանոցէն ելլալէն ետքը վայելելու առողջութեան վիճակին նայուե-լով, աւելի կամ պակաս պատժով պիտի դա-տապարտուին։

— Վերակի լուսնալու շաբաթ գիշեր երեք գող նաւակով մը ուն խաբանի կողմերը գնացով ծովէն դերայ շտեմարանի մը մէջ մտան, և մե-ջ գտնուած ներկի (պօյա) և ձիւթոյ (ղեֆթ) տակաւակները (վառը) նաւակը տանիլ ըս-կրան։ Ստիկանութեան գործակալները իս-կոյն իմանալով թէ ցամաքէն և թէ ծովէն գողերուն մօտ շտեմարանը և նաւակը պա-շարեցին, և վերջապէս վրանին յարձակելով զերկուսը ձեռք ձգեցին։ Իսկ երրորդը գի-շերին միջութեան շնորհքը դատարկ տա-կառի մը մէջ մտաւ ու պահուեցաւ։ Ստիկանութեան գործակալները ուրիշ գող-չկայ կարծելով ձեռք ձգած երկուքը մի-այն տարին նաւակն ալ մէկ տեղ։ Իայց գիշեր տանն բացուած շտեմարանին մէջ կրե-կին գող չմանալու համար քանի մը պահա-պան դուրսի կողմը նստան սպասեցին։ Տակաւաքանակ դիպինէսը (թշուռական դողը առաքինի փիլիսոփային անունով կոչե-նուած համարներովը կը խնդրեմք) առաւօ-տեան լոյսը տեսնալուն պէս գլուխը ահիւ և գողութիւնը վերցուց, չորսդին նայեցաւ ու թը-նամները հեռացած կարծելով կամոց կա-մաց իւր բնակարանէն դուրս ելաւ։ Իժադը դաբար ելքը մուտքին պէս յաճող չեղաւ։ Ինչու որ տակաւին շարժման ձայնը առնելով շտեմարանի դրան դուրսի կողմը սպասող պա-հապանները իսկոյն պատրաստուեցան ու ներս մտնալու գող սպասելով դուրս ելող մը բըռ-նեցին ու մարդասիրութեամբ իւր ընկերաց քովը տարին։

Իս տեղս չեմք կրնար չիշատակել թէ աս մօտերս թէպէտ գողութիւններ շատ պատա-հեցան, բայց գրեթէ ամեն անգամին ալ ոս-տիկանութեան աշտընութեամբ շարաքործ-ները ձեռք ինկան։

— Յարգի ընթերցողները մանաւանդ Պուր-սա հանքային ջուրերը մանալու գացողները ուրախութեամբ պիտի լսեն (կարծեմք) թէ օսմանեան շոգեշարժ նաւարկութեան ընկե-րութիւնը մօտերս պիտի սկսի շաբաթը եր-կու անգամ շոգենաւ բանեցընել Այմէիկի և մայրաքաղաքիս մէջ տեղը և այս շոգենաւ-ները, օգը ներելու ըլլայ նէ, ճամբան Սու-տանեայի նաւամատոցն ալ պիտի հանդիպին։

Նմանապէս Իզմիրի ծովու խորը (քեօր-

ֆէզ) շաբաթը երկու անգամ շոգենաւ պի-տի բանի։

Քիչ օրէն աս ճանապարհորդութիւննե-րուն յատկացեալ օրերն ալ ծանուցանելու հոգ պիտի տանիմք։

Յիշեալ ընկերութիւնը որոշեց նաև որ Վառնայի և Կոստանդնուպօլսոյ մէջ տեղը շաբաթը անգամ մը ուրբաթ օրերը շոգենաւ բանեցընէ, որչափ որ բարեխառն եղանակը տեսնու ըլլայ։

— Յիշեալ ընկերութեան նիւթայի իշ-թի անուն նորաշէն և 140 ձիու ոյժ ունե-ցող շոգենաւ աս օրերս Ենդեղայէն մայրա-քաղաքս հասաւ։ Ետք ալ գեղեցկութիւնը և ճանապարհորդաց հանգստութեան պէտք եղած ներքին կարգադրութիւնները կատար-եալ են միւս շոգենաւներուն պէս։

— Սուրբ պաշտի շոգենաւ որ բաւական ժամանակէ հետէ արքունի նաւարանը կը գտնուէր նորոգութեան կարօտութիւն ու-նենալով քիչ օրէն պիտի սկսի Վէրանիկ Վառ-նա և Սարմարայի ծովու խորշերը կանոնա-ւոր երթևեկութիւն ընելու։

— Պարսկաստանի արտաքին գործոց տե-սուէ Սըրզա Սէհմէտ Սէիփաշան մահուան լուրը առնուեցաւ այս օրերս։

— Իզմիր մատակ ձի մը բաւական մեծու-թեամբ քուռակ (թայ) մը բերաւ, որ ճա-կատին մէջ տեղը եռակիւնի աչք մը ունի։ Իժադը դաբար տեղը աս տարօրինակ հրէչն վախնալով ծնած առենը հեռի կեցաւ։ Իս-տակ ձին ալ անգնական մնալով ծնածը սատ-կըցուց։

— Պաշտօնական հաշիւէ մը կ'երեւի որ Հէ-ուէտիոյ մէջ (Օվդեցէի) 2,392,740 բնակիչ կան, որոց միայն 71,570-ը օտարական են։ Եւ մնացածը հուովեական և հրէայ են։

— Ենդեղայէնը արքայի յաւնաց եկեղեցին կողպատող գողերը, կը լսեմք, թէ մայրաքա-ղաքէս քան ժամու չափ հեռի տեղ մը ձեռք անցեր են, որն որ օստիկանութեան գործա-կալներուն աշտընութեան նոր ապացոյց մըն է։

— Երեքշաբթի լուսնալու երկուշաբթի գիշեր Պաղէ քափուսը կողմերը Սուսա Սաֆիլէի փաշային տունը այրեցաւ։ Սէծ սպարապետը, Սաղլամ պէյը և ուրիշ երեւ-ի անձինք անմիջապէս հրկիզութեան տեղը հասան, և մեծ ջանքով շրջակայ տուները ա-ղատեցին։ Կրակը տան վերի դասիկանէն ե-լած ըլլալով, վարի դատիկներու կահք կա-րասիքը մինչև անգամ հանքային առուիը կը-ցան հանելու։

— Սէծ սպարապետ փետմիտիլ Սէհմէտ փաշան Եփրատ գետի մօտ մինչև Օր քաղա-քը ճանապարհորդելու զխառնորութիւն ու-նի, որպէս զի այն կողմերուն թափառական բնակիչները ստիպէ, որ քանի մը տարիէ հե-տէ չլծարուած քաղաքական հարկերը հա-տուցանեն։ Սէծ սպարապետը պէտք եղած միջոցներն ալի գործ պիտի դնէ, որ այսու-հետև վաճառականներուն կարաւանները ան-վրտանգ կրնան այն կողմերը ճանապարհոր-դել։

— Ես օրերս հռոմեացւան Յունաց պատերաք Տ. Սաղլամ եպիսկոպոսին Հը-ռոմէն հրաման եկաւ որ հոն երթալով Պե-րութի եպիսկոպոսէն անոր վրայ եղած գան-գատանայ պատասխանէ։ Տ. Սաղլամը այս հրամանին դէմ կենալ ուզեց՝ ըսելով թէ ու-նանց բարձրագոյն գրան հրամանի իւր աթոռ-էն չկրնար զատուիլ։

— Գաղղոյ լրագիր մը փետրվար ամ-սոյ վրայ հետեւեալ հետաքրքրական հա-շիւը կ'ընէ՝ աս տարի ըստ նոր տուեմարի փե-տրվար ամսոյ մէջ հինգ կիրակի ըլլալուն ու-շագրութիւն ընելով։

Գրիստոսի թուականին սկիզբէն մինչև 1624 թուականը, շարունակաբար ամեն քսան և ութ տարին անգամ մը փետրվար ամսոյ մէջ հինգ կիրակի պատահեր է, որն որ 58 անգամ պատահած կ'ըլլայ։ Յիշեալ թուականէն 8 տարի ետքը 1632-ին նմանապէս փետրվար ամ-

սոյ մէջ հինգ կիրակի պատահեր է։ Ես հա-շիւը ընող լրագիրը կը զարմանայ (և իրաւ-ւամբ) թէ Բնչպէս 17 դարուց մէջ հինգ կի-րակեայ փետրվարը 28 տարին անգամ մը պա-տահելով՝ անկէց ետքը սովորական ժամանա-կէն 20 տարի առաջ պատահեր է։

— Սպանիոյ թագուհւոյն Սիզիլիոյն վե-րաւորութեան լուրը Պրիւսէլ հասնելուն պէս՝ հետաքրքիր անգղիացի մը, Սատրիտի Պրիւ-սէլէն հեռաւորութիւնը միտքը անգամ չբե-րելով, երթալ ոճրագործին պատժուելուն ներկայ գտնուիլ կ'առէ։ Ուստի անմիջապէս երկաթուղեայ գրաստունը կ'երթայ, ու յա-տուկ իրեն համար շոգեկառք մը հանել տա-լով՝ քանի մը ժամուց մէջ Փարիզ կը հասնի։ Ենկէց ալ շոգեկառք Օրլէան, Պորտո և Պայօն կ'երթայ, ուսկից մնացած ճամբան որ-բէնթայ ձերթով առնելով Սիզիլիոն գլխա-տելու տարուած առնելով Սատրիտի դրան քով կը հասնի։ Ենկէցայէս բաղմունութեան մէջ կը խառնուի ու քովը գտնուողներուն անհամար հարցումներ կ'ընէ։ Խօսած լեզուն աղէկ մը չհասկցուելով, ու հարցմունքն ալ կ'ստիպու պատճառելով՝ հետաքրքիրը օստիկա-նութեան ձեռք կ'իյնայ ու բանալ կը դուրսի։ Եւ թէպէտ Ենդեղայ գետապանին միջնորդու-թեամբ զեռ իրիկուն չ'եղած կ'ազատի, բայց Բնչ օգուտ, Սիզիլիոյն գլխատման հան-դէսը լըմնցած ու բաղմունութիւնը արդէն ետ դարձած էր։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Սեր յարգի ընթերցողները մինչև հիմայ առեւտրական լուրերէն զրկեցուած համար նե-րողութիւն կը խնդրեմք։ Ետք պատճառը մի-այն լրագրիս մէջ բուսական տեղ չունենալ-նիս է։ Եւ այժմ քանի մի տեղեկութիւններ միայն տալով կը բաւականանամք. աստուծով քիչ առնենէն ետքը Նոյն Ենդեղայ թեր-թը մեծցընելով՝ աւելի ընդարձակ լուրեր կ'ուտամք։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՄԱՐՏ

Սոսերս սեւ ծովէն եկած արմուտայ գը-րեթէ բոլորը միջերկրական ծովու կամ Ենդ-ղիոյ համար ըլլալով՝ մայրաքաղաքիս մէջ գը-նուածը շատ քիչ է։ Ուստի և գիշերն ալ հաստատ են։ Մէկ շաբաթուան մէջ Ենդղիոյ համար 38,000 քիլէ Բուսէլի կախուղ ցորեն և տեղական գործածութեան համար 15,000 քիլէ ամեն տեսակի կարծր և կակուղ ցորեն վաճառուեցան։

Ետքը ցորեն Լիթ 22 1/2 — 23 Պէսապիս 22 — 22 1/2 Բոսէլ 19 — 20 Կալա 20 1/2 — 21 Կոստ 21 3/4 — 22 1/4 Կախուղ ցորեն Ենդղի 12 — 14 Կալա 18 1/2 — 19 Բոսէլ 18 — 18 1/2 Սարայքեն Բոսէլ 12 1/2 — 12 Կալա 14 — 14 1/2 Ենդղի 12 1/2 — 12 1/2 Կալա 14 — 14 1/2 Ենդղի 9 — 9 1/2 համար 13 — 13 1/2 վարսակ 7 — 7 1/2 Ենդղի գտնուած արմը տիքը 10,000 քիլէ կարծր և 15,000 քիլէ կա-խուղ ցորեն է, որն որ շատ քիչ ըլլալով տե-րերը հետեւեալ գիշերով տեղական գործա-ծութեան համար քիչ քիչ կը վաճառեն։

Ետքը ցորեն Պէսապիս 24 — 25 Բոսէլ 21 — 22 Կախուղ ցորեն Ենդղի 16 — 17 գարի 10 — 10 1/2։

ԻԶՄԻՐ 21 ՄԱՐՏ

Տարն գլխավաճառ 210 — 220, տիկոն 11 կողով վաճառուած 112 ի չէքին. ճէհրի գլխուր 8 1/2 — 9 1/2 Տօխան փալամու 65 — 71 Բուրդ չուսացուած 205 — 210 Խոհվէ 570 — 620 Ենդղի կարմիր 54 — 60 Զոքար 190 — 202։

ՏԵԱՐԻ ԼՐԱԳՐՈՅՍ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ = ՍԱՀԱԿ ԱԳՈՅԵԱՆ
Ենդղի խաղաղական Բարձրագոյն Դրան։

Կ. ՊՈԼԻՍ Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՕՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ